



Ջևհ. Մկրտիչ Ա. Խրիմեան Հայրիկ Կաթողիկոս Մանայմ Հայոց :

Հայրենիքի մարգարէն էր ան, այիքները հայրենասիրական սարսուռներով ցցուած, աչքը ջնաղ տեսիներու, եւ մատները խրոխտ բաւերիւի մը վրան : Կանգնած ժողովուրդի մը գլուխը՝ իր վեհաշուք պատկերով կը լեցնէր դատարկութիւնը՝ զոր Թողուցին երբէք չվերադառնալու համար՝ երբեմնի թագաւորները : Մեռած էր դարը՝ պատրանքներու, ոսկեղէն պատրանքներու՝ որ իր կեանքն եւ էութիւնը կազմէր էին, եւ պէտք էր ինքն ալ անոնց յուարկաւորն ըլլալ : Իր դազադին ետեւէն պէտք է Արտաշէսի գուսաններու շքեղ թափօրը հետեւէր՝ վայրահակ դրօշներով, ու լացնելով ամբօխը՝ կորսուած Բոյսերու մեղամաղծիկ նուագներով : Շրջան մը, սերունդ մը, ազգային կեանքի հորիզոն մ'է որ իր հետ կ'աննետի : Կը կարծէ մարդ իր կորուստը ողբալ եւ անա առ բողջ ժողովուրդի մը վրայ է որ կ'արտասուէ, այնքան դժուարին էր զանազանել զինքը ազգութենէն՝ որուն ներկայացուցիչ ընտրուեցաւ բայց որուն անճնաւորումն եղաւ, եւ Հայաստանէն իր սիրտը, որուն մէջ պատկերուած էր անոր ամէն գետ եւ հովիտ : Բազմալէս, որուն մեծ բարեկամն եղաւ, իր յուշարձանին վրայ կը գետնդէ դափնեպսակներ՝ իր անուան հայումով ոսկեգօծուած՝ իբրեւ նախընտրեալ մը անոնց՝ զոր անմահութեան գարունները պիտի ծաղկեցնեն իր հանգստարանին վրայ, — յաւիտենական ուխտակարը՝ պատմաբաններու :

ԽՄԲ.

Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ



Իր վարքն ու գրական գործերը, ազգային գործունեությունը, — առաջնորդությունը, — պատրիարքությունը, — կաթողիկոսությունը:

Դադրած է բարախելէ սիրտը՝ որ սիրոյ արեւ մ'եղաւ: Այլ փակուած են այն աչքերը՝ որ գրեթէ դար մը հայութիւնը ողբացին: Որք է Հայրենիքը, զրկուած Հայրիկէն: Մասնական մահ մը սակայն, քանի որ համբաւը պիտի ապրի հայ գրական մատենագրութեան մէջ, և պիտի փայլի իր անունը՝ ազգային կրօնական պատմութեան մէջ:

Այդ անձնատուրությունը՝ որ ժողովուրդը պիտի ներկայացնէր իր բոլոր զգացումներուն մէջ և Հայութեան սէրը իր բոլոր կեանքին, պէտք էր ժողովրդեան ծոցը, հայրենեաց կեդրոնին մէջ ծնանիլ: Կեանքը սկսաւ աղքատ յարկի մը ներքեւ, վաճառ մէջ 1820ի ապրիլ 16ին:

Երբ Խորիմեան Հայրիկը դեռ կըրմցուց Մկրտիչ կը կոչուէր՝ ինչպէս բովանդակ հայ հայրենիքը՝ այսպէս վաճառ չափ հեռու էր Գիտութեան և Գաղափարի լոյսէն: Դեռ մինչեւ այն ատեն հայ-միջնադարեան համոզումը կը շարունակուէր, թէ՛ կոտորածը, սուրը, աւարառությունը, գերութիւնը՝ երկինքը կը զրկէ «վասն մեղաց մեռոց»։ որոց մեծագոյնն էր անշուշտ ճակատագրական համակերպութիւնը:

Այս դարն է ահա որ Մկրտիչին խանձարուրը կ'ըլլայր ժողովրդեան լալիւնն է որ իր մօր օրօրին կը փոխանակէ:

Կըրմցուց Մկրտիչը նոյն հոսանքին հետ իր դաստիարակութիւնը կը ստանայ, այն է՝ Աղաթոս կարդալ, շարական երգել, ասոնց հետ միասին իրենց զանները աւրածել, յետոյ Խաչատուր Հօրեղօր (որ միանգամայն իր դաստիարակն էր) արհեստը սովորիլ — կտաւ գործել: Արհեստէն աւելի ուրիշ տենչ մ'ունի երիտասարդ Մկրտիչը — ուսման սէրը, որով կը յուսայ խաւարապատ երկրին լոյս մը ըլլալ: Ու այդ նպատակով Լիմ և Կսուց վանքերը կը յաճախէ վանականներէն զբարար լեզուն և հայկական գիտութիւնները ուսանելու համար: Ժամանակին վանականք՝ հաղորդեցին իրենց աշակերտին իրենց գիտութիւնը, որուն Մկրտիչ պարտք չունէր երախտապարտ ըլլալու՝ իր ապագայ հմտութեանց համար:

Ուսման այս չափն ալ չգոհացուց զՄկրտիչ, նա հեռո՛ւն խաւար հորիզոնէն անդին լոյս մը կը նշմարէր. Գիտութեան ջահն էր այդ զօր վառեց Սեբաստացին Մխիթար հայրենիքէն շատ հեռու: Մկրտիչ գէպ ի այդ լոյսը ուզեց թոշիլ, պանդխտիլ, բայց մօրը Թախանձանաց գիշանելով վանէն չհեռացաւ. հոն ամուսնացաւ և դուստր մը միայն ունեցաւ:

Արդէն ուսեալ՝ ի Կ. Պոլիս կը գտնենք զԽորիմեան 1850 թուականէն առաջ: Այդ թուականներուն ազգային շարժում մը, ազգային հոգի մը կը բռնկէր Կ. Պոլսոյ մէջ. Խորիմեան ժամանակակից ազգայնոց համակրանքը կը գրաւէ. և իր անունը կը թողու անոնց շրջանակին մէջ: Հ. Բագրատունին 1847ին Վիրգիլիոսի Մշակականին ոսկեղէն թարգմանությունը կը հրատարակէ, Խորիմեան կ'ուսումնասիրէ անոր լեզուն և տաղաչափութիւնը, և այդ հոգով կը յղանայ իր առաջին երկը «Հրաւիրակ Արարատեան» գոր կը հրատարակէ 1850ին:

Քիչ ժամանակի մէջ շարադրեց այս երկը, 1849 ին պէտք է սկսած ըլլայ, վասն զի այդ թուականին է որ նա «Բազմավէպ»-ի մէջ՝ կը հրատարակէ զՀ. Բազմատունին գովաբանող քերթուած մը, որուն մէջ կ'ըսէ.

- « Հայր, առաւել արժան էր քեզ ոչ զօտարին քնար հարկանել...
- » Եւ դու ի յԱյրարատ առ դըրախտին երանի՛ թէ
- » Նըստէիւր, նըւագէիւր զարարատեան գեղեցկութիւն»:

Յետոյ ինքն խրիմեան իր փափաքը և առաջարկը ինքը կ'իրագործէ «Հրաւիրակ Արարատեան»ով, Հայրենեաց քերթողը չորս նոսրագնորով իր հետ կը շրջեցնէ զհայ մանկտին, ցուցնելով անոր Մայր երկրին ամէն մէկ անկիւնը, ամէն մէկ խորշը, կանգ առնելով այն խաչվէմերուն մօտ՝ ուր կը հանգչին դարերէ ի վեր ազգային վերակենդանութեան գործիչները, Բանաստեղծը կը հրճուի երբ լուսաւորուած կը տեսնէ զՎաղարշապատ, երբ փառքերով կ'երեւայ իրեն Անին. և իր խնտովը ողբի, լացի կը փոխէ երբ յետոյ զանոնք աւերումի և կործանումի մէջ կը նկատէ, խրիմեանը երկար չի շարունակեր իր ողբը, ինչ որ տոհմային հիւանդութիւն մ'է, այլ նա իր հուժկու ձայնով Եղեկիէլի մը նման Նախնեաց ոսկորոտիքը գերեզմանէն կ'ուզէ հանել, անոնց միւս զգեցնել և գործել...

- « Ի նուագ վերջին, ո՛վ մանկունք, տանիմ ըզձեզ ի միւս կղզիս
- » Ի Լիմ և ի կըտուց սուրբ կըոնաստանքս միանձանց.
- » Թըրդը հապա թեւածեալ գծովուն հատեալ լայն ասպարէզ
- » Շոյտ հասցուք անդ ուր կամիմ դիւր տալ ոտից իմ վաստակեալ
- » Եւ քնարիս թուլադաշնակ՝ հանգիստ վայրիկ մի լըռութեամբ,
- » Եկայք, վա՛շ, յիմ սիրեալ տեղ և խաղաղիկ նաւահանգիստն,
- » Ուր փութան նաւըն խոռվեալ՝ գերծեալք յալեաց կենցաղոյս այս
- » Զխաչին բացեալ զառաքատ հողմով սիրոյ փրկչին վարեալք.
- » Եւ ի տապան իմն մըտաք անձեռագործ և հողանիւթ
- » Ի փոքրիկ ծովակիս կազմեալ վերին ճարտարութեամբ.
- » Ուր պահին մաքուր երամ սուրբ աղանեաց մըշտամընչիւն,
- » Որ փախուցեալք ի բազէից ի ծոց սորին թաքչին անըոյթ » և...

Յետոյ մանրամասն կը նկարագրէ կըոնաւորաց խցիկները, որոց միոյն մէջ ինքն ալ քնակած է իր հայրենի լեզուն և պատմութիւնը ուսումնասիրելու համար:

- « Աղբատին յանձուկ խրցկունս մըտեալ, մանկունք, արդ շրջեցուք,
- » Որ ի սորին շինեալք են անձուկ հետոց հետեւողացն:
- » Զի՛ք, տեսէ՛ք, մութ և անշուք զեղատըխուր են քնաւին,
- » Պատեալ որմովը դուզնաքեայ, ցած և խոնարհ են առաստաղքն,
- » Մի և կամ երկու լուսանցս ունին միայն ի յարեղգէմ,
- » Յոյց շողիկ կաթեն և լոյս առնեն անձանցն արգելական:
- » Իսկ յատակք են անպաճոյճ լոկ խըսրիկ մի արկեալ եւեթ,
- » Զարմանամ, Բըր ի խոնաւ գետնոյն մարմինք ոչ խօթանան,
- » Այլ միշտ առողջ մընան և ժիր թէն քնին հարկւրամեայ»:

Խրիմեան Ս. Ղազարու Մխիթարեանց գրքերով զարգացած՝ մասնաւոր սէր մը և հաւանակունք մը կ'ունենայ դէպ ի այդ միաբանութիւնը և զոր նոյնը միշտ Զերմ կը պահէ

1. Հմտ. Բազմ. 1849 էջ 308 - 310,

մինչեւ վերջ: Երբ Պուլիս կու գայ հոն կը գտնէ զՀ. Բագրատունին, անոր քով կը կատարելագործէ զբարբար լեզուին ուսումը և ինքզինքը անոր աշակերտ կ'անուանէ: «Բագմավէպ»ը կ'ըլլայ որ առաջին անգամ յիշեալ քերթուածով զԽրիմեան վարժաւորեալ գրական հրապարակը կը հանէ, և նոյն «Բագմավէպ»ին մէջ Խրիմեան Հայոց Հայրիկ եղած գրեթէ իր վերջին քերթուածը կը հրատարակէ¹:

Հարկ կը զգամ այս էջերուն մէջ կարդացնել նոր սերունդին Խրիմեան վարժապետի առաջին գրութիւնը, ուսկից կը զուշակուի լուսաւոր ապագայ մը հայ գրականութեան էջերուն մէջ:

Մեծիմաստ և բազմահմուտ մեծահայտի Հօրդ՝ Դոյզն զովեստից բուն շնորհաւարտ յաշակերտէ ձօնեալ:

Զոգիդ հանճարաւոր և զտարփալիդ հեռաւորաց,
Եւ 'ի շարս հայ Մուսայից զասեալ 'ի զլուս իրաւապէս,
Գովել արժան է իսկ սրբտիւ գրտեալ շնորհապարտ:

Ձի համբաւ քո տենչալի 'ի լուր հընչեալ համագգեաց,
Յառաջ քան ըզմարմնոյդ՝ տալով զոգւոյդ ծանօթութիւն,
Շարժէ զանծանօթն եւս ըստ մարմնոյն տեսութեան իդ՝
Ճանաչել ըզքեզ այսպէս, ծանուցանել անծանօթիցն:

Քաղցրալուր քնար քոյին գրաւեաց զոգի իմ մրտադիր.
Ըզմայլեալ կամ աւասիկ 'ի նուագ բանիցդ գեղգեղածայն,
Որ հանգոյն մեծին Որփեայ քաջահընչող քնարահարին
Նըւագեալ 'ի քաղցր աղի մատամբ քոյին քաջարեւատ,
Ընդ սեռին բանաւորաց տաս և զմայլել սեռից անբան:
Եւ այդպէս քնար 'ի ձեռինդ երթեալ նըստար յԱյրարատ,
Թորգոմեան զմանկտիւ բոլոր՝ ածեր ըզքեւ շուրջ գեղապար՝
Հրաշաձայն անդ նըւագեալ ըզգեղեցիկ բնութեան ձիրս
Խանդակաթ ոգւոց նոցին զփափագ լրցեր ծայրալիր:

Հայր, առաւել արժան էր քեզ ոչ զօտարին քնար հարկանել,
Այլ ըզքոյդ՝ որ վհճ ոգւով քաջ եւս հընչի հայրենւոյն,
Նըման վիրգիլիոսին՝ որ յանուշակ Պարթենոպէն
Պարապեալ՝ երգէր անոյշ զանգարդ երկրին մըշակութիւն.
Եւ դու 'ի յԱյրարատ առ դրբախտին երանի՛ թէ
Նըստէիր նըւագէիր զարարատեան գեղեցկութիւն:
Բայց և ոչ կամիմ այսու ըզվիրգիլեան ճարտար քերթուած
Համարել այսուհետեւ նորա ոգւոյն միայնոյ ձիր,
Զօտարին վարկանելով՝ ձեռնն զճարտարիդ զըւացեալ.

Այլ գործ հանճարաւոր մատանց քոյին հրաշահիւս,
Որ գիտաց ճարտարութեամբ այնպէս յեղուլ 'ի հայ բարբառ,
Մինչեւ զօտարին բան սեպհականել ճարտար ոգւոյդ:

Դու այսու ըզգօն ոգւոյն կըրես յանձին քում ըզշնորհ,
Յոսկեղար նոր փոփոխմանս յայտնեալ Մեքովք հրաշարուեստ,
Ըզբարբառ այլում ձայնի յիւրն փոխեալ հըրաշապէս:

1. Բագմ. 1902 էջ 548 «Իսաահակայ զենուսն» քերթուածը և սակից առաջ Հ. Ալիշանի յիշատակին գրած մէկ յօդուածը. անդ էջ 849.

մինչեւ վերջ: Երբ Պուլիս կու գայ հոն կը գտնէ զՀ. Բագրատունին, անոր քով կը կատարելագործէ զբարբար լեզուին ուսումը և ինքզինքը անոր աշակերտ կ'անուանէ: «Բագմավէպ»ը կ'ըլլայ որ առաջին անգամ յիշեալ քերթուածով զԽրիմեան վարժաւորեալ գրական հրապարակը կը հանէ, և նոյն «Բագմավէպ»ին մէջ Խրիմեան Հայոց Հայրիկ եղած գրեթէ իր վերջին քերթուածը կը հրատարակէ¹:

Հարկ կը զգամ այս էջերուն մէջ կարդացնել նոր սերունդին Խրիմեան վարժապետի առաջին գրութիւնը, ուսկից կը զուշակուի լուսաւոր ապագայ մը հայ գրականութեան էջերուն մէջ:

Մեծիմաստ և բազմահմուտ մեծահայտի Հօրդ՝ Դոյզն զովեստից բուն շնորհաւարտ յաշակերտէ ձօնեալ:

Զոգիդ հանճարաւոր և զտարփալիդ հեռաւորաց,
Եւ 'ի շարս հայ Մուսայից զասեալ 'ի զլուս իրաւապէս,
Գովել արժան է իսկ սրբտիւ գրտեալ շնորհապարտ:

Ձի համբաւ քո տենչալի 'ի լուր հընչեալ համագգեաց,
Յառաջ քան ըզմարմնոյդ՝ տալով զոգւոյդ ծանօթութիւն,
Շարժէ զանծանօթն եւս ըստ մարմնոյն տեսութեան իդ՝
Ճանաչել ըզքեզ այսպէս, ծանուցանել անծանօթիցն:

Քաղցրալուր քնար քոյին գրաւեաց զօգի իմ մրտադիր.
Ըզմայլեալ կամ աւասիկ 'ի նուագ բանիցդ գեղգեղածայն,
Որ հանգոյն մեծին Որփեայ քաջահընչող քնարահարին
Նըւագեալ 'ի քաղցր աղի մատամբ քոյին քաջարեւատ,
Ընդ սեռին բանաւորաց տաս և զմայլել սեռից անբան:
Եւ այդպէս քնար 'ի ձեռինդ երթեալ նըստար յԱյրարատ,
Թորգոմեան զմանկտիւ բոլոր՝ ածեր ըզքեւ շուրջ գեղապար՝
Հրաշաձայն անդ նըւագեալ ըզգեղեցիկ բնութեան ձիրս
Խանդակաթ ոգւոց նոցին զփափագ լրցեր ծայրալիր:

Հայր, առաւել արժան էր քեզ ոչ զօտարին քնար հարկանել,
Այլ ըզքոյդ՝ որ վհճ ոգւով քաջ եւս հընչի հայրենեւոյն,
Նըման վիրգիլիոսին՝ որ յանուշակ Պարթենոպէն
Պարապեալ՝ երգէր անոյշ զանգարդ երկրին մըշակութիւն.
Եւ դու 'ի յԱյրարատ առ դրբախտին երանի՛ թէ
Նըստէիր նըւագէիր զարարատեան գեղեցկութիւն:
Բայց և ոչ կամիմ այսու ըզվիրգիլեան ճարտար քերթուած
Համարել այսուհետեւ նորա ոգւոյն միայնոյ ձիր,
Զօտարին վարկանելով՝ ձեռնն զճարտարիդ զըւացեալ.

Այլ գործ հանճարաւոր մատանց քոյին հրաշահիւս,
Որ գիտաց ճարտարութեամբ այնպէս յեղուլ 'ի հայ բարբառ,
Մինչեւ զօտարին բան սեպհականել ճարտար ոգւոյդ:

Դու այսու ըզգօն ոգւոյն կըրես յանձին քում ըզշնորհ,
Յոսկեղար նոր փոփոխմանս յայտնեալ Մեքրովբ հրաշարուեստ,
Ըզբարբառ այլում ձայնի յիւրն փոխեալ հըրաշապէս:

1. Բագմ. 1902 էջ 548 «Իսահակայ զենուսն» քերթուածը և սակից առաջ Հ. Ալիշանի յիշատակին գրած մէկ յօդուածը. անդ էջ 849,

Ահա քեզ աշակերտիլ ես յօժարիմ յառաջագոյն՝
 Հետեւեալ սիրողապէս քոյդ ընթացից նախաշաւիդ,
 Անցեալ զմերժաւորօք՝ յայս հուպ եղէ քեզ 'ի հետուստ.
 Զօդ ծրծեալ Հայաստանեայց՝ շոյտ ըզգացի զոգի նախնեացն,
 Որ այժմիկ քեւ նորոգեալ 'ի մանկուոյն լուր քաղցրացաւ:
 Եւ քնարիդ անզուգական մատուցի ունկըն հեշտարար.
 Իբրու զակըն պատուական զըտեալ յանկարծ յազարակի,
 Որ զօղեալ և թագուցեալ էր 'ի դարուց անտի հարցն,
 Վաճառեալ ըզՀոմերոս զակն ըստացայ ըզՎիրգիլեան.
 Զի 'ի նմա տեսի փայլեալ ըզՎեհ ոգին իմ նախնեացն,
 Որ ցարդ կայր դադարեալ ըսպասելով ոգւոյդ ճարտար,
 Դու միայն ըզլար քնարին նախնեաց մերում քաղցրածայն
 Որ յարդեան նոր Մուսայից էր թուլացեալ բոլորովին,
 Պընդելով նոր յանոյշ ձայն հընչեցուցեք քաջապէս
 Ի լուր նոցին մանկանց՝ որ հարց ձայնից ցանկ կարօտին:
 Այդ վրասմ քո զայդ ոգին որ հայրենեացն եղեւ սիրող,
 Սիրեմ յոյժ ըստ սըրտի և նըմանել դոյզն ինչ՝ անձկամ,
 Որ ինձ զանձ ցանկալի շահել այսպէս հոգ տարաւ,
 Եւ զոսկի քնար նախնեաց պատուասիրեաց նոր պըսակեալ.
 Որով և քոյդ անուն պատուեցաւ արժանապէս,
 Անմահ յիշատակօք 'ի Վիրգիլեան ճակատ զըրեալ:

Խրիմեան Վարժապետ յետ Հրապարակ Արարականը հրատարակելու՝ նոյն տարին (1850) Կիլիկիա կ'ուղեւորի և անկից Երուսաղէմ ուխտագնացութեան կ'երթայ. այս ճանապարհորդութիւնը առիթ կ'ըլլայ իրեն նոր երկ մը եւս հրատարակելու և զոր կը հրատարակէ ի Վ. Պոլիս 1851ին «Հրապարակ երկրին աւետեաց» տիտղոսով. այս եւս զբարբար լեզուով և հայկական տաղաչափութեամբ է:

Խրիմեան Վարժապետը շատ սիրալիւր ընդունելութիւն կը գտնէ Երուսաղէմայ միաբաններէն և բացառութեամբ իրեն միաբանից սրահին մէջ սենեակ մը կը տրուի. այնպէս որ Խրիմեան իսկ երբ երբորդ անգամ Երուսաղէմ կու գայ 1890ին և «Հրապարակ երկրին աւետեաց»ը հոն կրկին կը հրատարակէ՝ յառաջաբանին մէջ զարմացմամբ կ'ըսէ. «Նախագուշակ էր արդեօք սենեակն այն թէ տիրացու Մկրտիչն՝ վարդապետ լինելոց է. զի բնակեցայ ես ի թաղն և ի շարս միաբանական դասուն»:

Այդ սենեակին պատուհանը կը բացուէր Զիթենեաց լիւրան վրայ:
 Հրապարակ Երկրիկն աւետեացը գրուած է ճշմարիտ հաւատացեալի հոգւով և հաւատքով. Խրիմեանը երկիւղածութեամբ կ'անցնի Նազարէթէն, Բեթլեհէմէն, Յորդանանու եզերքէն, կը մտնէ Բեթլանիա, կ'եւլէ Զիթենեաց լեռը, միշտ Քրիստոսի հետեւելով. զանց չընել նաեւ երթալ Պիղատոսի պալատը, Անայի և Կայափայի տները, վասն զի յանդիմանութիւն ունի իր սրտին մէջ անոնց ուղղելիք:

Այս երկը, ինչպէս նախորդը, վկաներ են թէ Խրիմեան վարժապետը ո՛րքան զարգացած, հմտացած է ազգային պատմութեան, աշխարհագրութեան մէջ, և ո՛րքան տեղեակ է Ս. Գրքին:

• Երբ Խրիմեանը 1850ին Երուսաղէմայ խցիկին մէջ քաշուած «Հրապարակ»ը կը շարադրէր՝ իրեն ախորժիկ մանրավէպ մը տեղի կ'ունենայ, զոր կը պատմէ 1892ի յառաջաբանին մէջ. «Յաւուր միում մինչ պարապէի և ձայնարկեալ եղանակաւ երգէի և գրէի, զի առանց երգելոյ՝ երգ հոգի չունի, յանկարծ եկն եկաց առաջի դրան

սենեկին հանգուցեալ տէր Յովհաննէս մեծագործ պատրիարքն: Ձայնդ առի, ասաց, տիրացու Մկրտիչ, զի՛նչ երգես և գրես: — Տէր Սրբազան, ասացի, զՀրապարակն Աւետեաց երկրին գրեմ: — Զո՞վ Հրապարակ, ասաց: — Զմանկունս և զտողովուրդս Հայոց հրապարեմ, Տէր հոգեւոր: — Գրեա՛, գրեա՛, որհնաւ լինիս: հրաւէր կարգաւ, թող յուխտ գան Հայոց ջերմոռանդ ժողովուրդ: զի բազում գանձուց պէտս ունիմ և մտադիր եմ եթէ յաշիղէ Տէր՝ նորանոր շինուածս կառուցանել»:

Թրիմեան 1853ին արդէն վան դարձած է. հոն վախճանած գտնելով ամուսինն ու զստրիկը՝ կ'որոշէ քաշուիլ աշխարհային կեանքէ և վանք մը առանձնանալ. և 1854ին փետրուար 26ին Աղթամարայ Պիւլպիւնեան Պետրոս կաթողիկոսէն վարդապետ կը ձեռնադրուի իրբու միաբան վարդապայ վանքին:

Ահաւասիկ լայն ասպարէզ մը Թրիմեան վարդապետին դիմաց, երկիր մը խոպան և անմշակ, մտքեր անձուկ, խաւարապատ, երիտասարդ վարդապետը ուխտած էր կերպով մը լուսանորել իր միաբանակիցները:

Թրիմեան կը քարոզէ, լոյսին ճամբան կը ցուցնէ իր միաբանակցաց. կ'ուզէ որ ամէն մէկ վեղարաւոր շքեղ տապանաքարի մը տակ դեռ չհանգչած գործ մը թողու իր հայրենեաց և հայրենակցաց մէջ:

Բայց կրօնաւորը որոնք երբէք չէին ուզեր իրենց թմրութենէն սթափիլ, կը հակառակին Թրիմեանի գաղափարաց և երբ տեսան որ բանավարութեամբ պիտի չկարենան յաղթել, զբարտաւթեան գէնքն իրենց ձեռք առին. զէ՛ք մը՝ որ անմեղնեւ բուն դիմաց շուտով կը հնարուի:

Եւ Թրիմեանը, որ ինքզինքը ազգային լուսաւորութեան և զարգացման նուիրեց՝ մի քանի անգամ ստիպուեցաւ վարագէն Պրիւս գալ ինքզինքը արդարացնելու համար:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Շաքայարեկի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՄԵԿԻԿ

ՏՈՒՍ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Առայիկ արարուած — առայիկ տեսիլ

(Ս. Մոփիայի Ռրապարակը. շրջակայ բոլոր պայտսները զարդարուած են զրօշակներով ու զորգներով: Ենմիմ խորը կը տեսնուի քիւզանդա. կամ տաճարը, ուսկից խմբերգներ կը հասնին. Ռրապարակիմ վրայ՝ մեծ բազմութիւն զիմուորաւ կամներու, իշխաններու, վաճառակամներու):

Ա. Վաճառող. — Գորգեր, Սպահանի գորգեր, պանչելի նկարներով:

Բ. Վաճառող. — Նժոյգ մը, ազնուական տէր. ճիշդ Զեզի՛ կը վայելէ, բարեձեւ, աշխոյժ, քամիէն ալ երազ:

Գ. Վաճառող. — Բանջարներ:

Դ. Վաճառող. — Երիտասարդ Արաբներ, երիտասարդ Արաբներ. կը ծախուին ամենաարժան գնով. զեզի՛ կինը և որդիքները միաւ սին գնողներուն. ուժով բազուկներ, առողջ

մարմիններ. մարդիկներ կը ծախեմ, ամէն տեսակէ, ամէն հասակէ:

Քրաքերոս գինեպան (թեոփանոյ կայսրուհոյն հայրը). — Բարեւ, բարեկամ. ի՛նչպէս կ'երթայ գործերնդ:

Դ. Վաճ. — Ատ բանը մի՛ հարցներ. Զմիկի բուրդ գործերնիս կ'աւել: Եւ յա՛յափ գերիներ կը դրկէ քաղաք՝ որ գինեւինն սաստիկ ընկած է. մարդիկները հիմակ շատ մեծ արժեք չունին. այնպիսի դարու մը մէջ կ'ապրինք՝ որ մարդիկներ ծախելով միայն՝ կաւելի չէ շնորհով ապրիլ:

Նայէ՛, որչափ երիտասարդներ, մարդկութեան ծաղիկներ. բայց վաստկածս այնչափ քիչ է որ՝ կարծես թէ իրական ծաղիկներ է որ կը ծախեմ:

Քրաքերոս. — Քիչ մը միւրթարեք քեզ. այս առտու քաղաք ի՛նչ մը և մարդ մը զընելու համար. մէկը միւսին վրայ հեծցուցած պիտի տանիմ. ուրեմն ինծի գերի մը հարկաւոր է. առաջուց երկու պայման. ոչ սուղ ըլլայ, ոչ ալ քրիտոսենայ:

Դ. Վաճ. — (խաչակնքելով ինքզինքը). Ո՛չ — քրիտոսենայ. ի՛նչ կը նշանակէ անպատճառ ... կը զայթափուիմ:

Քրաքերոս. — Եւ սակայն պարզ է. ես գինեւ տանս համար պիտի գործածեմ և բնական